

ԴԷՊԻ ՕՏԱՐՈՒԹԻՒՆ

Երկա՛ր ու երկա՛ր գծերն երկաթէ
 Գնում են հեռու մի օտարութիւն.
 Դաշտերն է խանձում տօթը ծանրաթև,
 Ճնշող մորմոք կայ այս մթնոլորտում:

Դիմացս կիզող շոր ճանապարհն է
 Անյայտ ձեռքերով քաշում ու տանում.
 Գնում եմ դէպի նոր հորիզոններ
 Խոհերս թողած մեծ կայարանում:

Յիշում եմ դէմքեր ինձ ճամփայ դցող,
 Սիրող, հարազատ ու գորովալի.
 Թախիծ ու ժպիտ ողողւած լացով
 Ու մօրս դէմքը քաղցր ու սիրելի:

Ու սրտամրմուռ յուշերն մի առ մի
 Յորդում են անզուսպ, յետոյ վարանում.
 Ու յիշում եմ մեր բաժանման ժամին
 Մօրս արցունքը մեծ կայարանում:

Ղուսմ

ԾԱՌԻ ՅԵՏԵԻՒՑ

Վախկոտ եղնիկ էր կարծես, զգոյշ մօտեցաւ պատին,
 Դէմքի կէսը դուրս հանեց ծառի յետևից.
 Սիրտը շփոթ, փոթորիկ, մի փունջ դիժ մազ ճակատին,
 Մի աչքով աչքով արեց ծառի յետևից:

Տղան իր շուրջը նայեց, եկաւ յոյգով անսահման,
 Սիրոյ քշփշոց լսեց ծառի յետևից.
 — Աղջիկ, իմ անուշ սիրա՛ծ, աղջիկ, դու իմ աննման,
 Համբոյրի շրշիւն լսեց ծառի յետևից:

Սրտի բաբախ, հեք ու վախ, ու անջատում ակամայ,
 Տղան դուրս եկաւ զնաց ծառի յետևից.
 — Տղա՛յ, մեռնո՛ւմ եմ, մեռնում, տղա՛յ, խենթ եմ քեզ
 համար,
 Ու խո՛ւլ հեծկլտանք լսեց ծառի յետևից...

Տաք ջուր

Ք Ա Ո Ս

Ծով էր շառաչուն. քամի ու գիշեր,
 ներսում՝ սեղաններ, ծիծաղ ու աղմուկ.
 Բաժակներ անթիւ ու շիշե՛ր, շիշե՛ր,
 Ու մի մոռացում լոյսերում տամուկ:

Ու հնչող նւագ, ու խմիչք հոսուն,
 Ալիք՝ փշրւող անյոյս շառաչով.
 Կանաչ լոյսի շերտ մթութեան փոսում,
 Մեռնող արձագանգ, հեռո՛ւ, հառաչող:

Ու կուշտ մարմիններ, անփոյթ ու խոշոր.
 Մութի մէջ կորչող անյայտ ճանապարհ,
 Ու շրթեր խոնաւ, աչքեր վաւաչոտ.
 Արաբ պարուհու կրքոտ պորտապար:

Ու յետոյ փողոց, յետոյ կէսգիշեր.
 Ծովափ, հորիզոն մութ ու անյատակ.
 Ու ցնցոտիներ, ու մերկ մարմիններ,
 Քաղցած ու նիհար ձգւած պատի տակ:

Իսկ այնտեղ ներսում՝ նւագ ու գինի,
 Ու կարմիր լոյսեր, կին ու երգ ու պար.
 Այնտեղ՝ խրախճանք ցոփ ու վայրենի,
 Արաբ պարուհու կրքոտ պորտապար:

ԱՐԵԻ, ԱՐԵԻ...

Ո՞ւր է այն կղզին — մի կտոր արև,
 Արևից պոկւել, ջրերն է ընկել.
 Ո՞ւր է դրախտն այն կանաչատերև,
 Որտեղից խափշիկ աղջիկն է եկել:

Բայց այս մշուշոտ հսկայ քաղաքում
 Ի՞նչ կայ արևոտ իր սիրտը գերող.
 Մշուշ է տեսնում իր արև հոգում
 Խափշիկ աղջիկը տխուր աչքերով:

Սրբում է մաքրում նորից ու նորից,
 Արևի մի տենչ իր աչքերի մէջ,
 Արև չտեսաւ այլևս այն օրից,
 Երբ ընկաւ, կորաւ այս մշուշի մէջ:

Խոնաւ աչքերով նայում է հեռուն,
 Ժպտում է, երգում ընդհատ հեքերով,
 Բայց թախիծ ունի իր լայն շրթերում
 Խափշիկ աղջիկը տխուր աչքերով:

Լոնդոն

ՄԻ ՔԱՂԱՔ ԷՐ ԳՈՐԾ...

Մի քաղաք էր գորշ, հին իտալական,
 Ու փողոց էր մութ, նեղ ու քարքարոտ,
 Ու կանայք էին, խեղճ, թափառական,
 Սիրոյ գգւանքի ու հացի կարօտ:

Անձրև էր իջնում, լալիս էր խօսում.
 Պանդոկ էր քարէ, փոս ու ծխապատ.
 Ու առատ գինի, գինի էր հոսում,
 Գինի էր բուրում առաստաղ ու պատ:

Եւ աղմուկ էր խուլ, գինի էր թափւած.
 Երգ էր վշտահար մոռացւած սիրոյ.
 Սև սեղան էր թաց, բանւոր էր հարբած,
 Ու աղջիկ էր շէկ լացոտ աչքերով:

Փողոց էր, կանայք, անձրև էր, գիշեր.
 Պանդոկ էր, գինի, ու ծուխ էր այնքա՛ն.
 Կարօտի երգ էր, ու աղջիկ էր շէկ.
 Մի քաղաք էր գորշ, հի՛ն, իտալական:

ՇԱՏՐԷԱՆՆԵՐ

Շատրւանների ջրերի նման
Հոսեց իմ երգը մաքու՛ր ու մաքու՛ր.
Շատրւանների երգով աննման
Հնչեց ու հնչեց երգը իմ հոգու

Ո՛չ ոք չիմացաւ, թէ ինչո՞ւ, ինչո՞ւ
Նւիրեցի ինձ իմ սրտի երգին.
Թէ ի՞նչու երգս տխուր է հնչում,
Ու միշտ թախծոտ է իմ երգոտ հոգին

Ո՛չ ոք չպիտի գիտենայ, թէ ե՞րբ
Հոգիս թրթռաց յոյգով անհամար,
Ու կեանքս դառաւ անհատնում մի երգ
Բոլորի սրտում, բոլորի համար...

Թիվով

ՔՈ ԵՐԳԻ ՆՄԱՆ ՈՋ ՄԻ ԵՐԳ ՉԿԱՅ

Որքա՛ն հեռու եմ, երկիր իմ անգին, քեզանից հիմա,
 Ու որքա՛ն երկար չեմ լսել երգդ, չեմ լսել ես քեզ.
 Ու որքա՛ն, որքա՛ն երգեր եմ լսել հեռուներում այս,
 Որքա՛ն եմ յիշել երգերդ չքնաղ, սրտով սիրակէզ:

Ու կարօտել եմ անզուսպ կարօտով ու սիրագորով,
 Ու սպասել եմ, ու տենչացել եմ, արտասուել թաքուն—
 Ե՞րբ պիտի լսեմ, ե՞րբ պիտի յուզւեմ խոնաւ աչքերով,
 Երբ պիտի թափւեն երգիդ լարերը իմ կարօտ հողում:

Աշխարհ շրջեցի ու աշխարհ տեսայ, աշխարհը բոլոր,
 Հայրենի երկի՛ր, հայրենի երկի՛ր, քո երգն է վկայ,
 Այնքա՛ն նրբահիւս, այնքա՛ն սիրառատ, այնքան քնքշօրօր
 Ամբողջ աշխարհում երգերիդ նման ոչ մի երգ չկայ:

Մադրիդ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆՍ

Իմ նախկին ուսուցչուհի
Սիրելի տիկին Հռիփսիկ Իփէկեանին

Մանկութիւնս ես տեսա Ձեր ջինջ աչքերում,
Հանդիպեցի նրան ես Ձեր թաւ ձայնի մէջ.
Մանկութիւնս յետ եկած ինձ է համբուրում,
Ու թերթում է անցեալի գիրքը էջ առ էջ:

Մանկութիւնս ոսկեթև այցի է եկել,
Ու նայում է Ձեր խոհուն աչքերի խորքից.
Մանկութիւնս ժպտադէմ գլուխն է թեքել,
Ու պատմում է հեռաւոր լուսէ եզերքից:

Օ՛, իմ քաղցր մանկութիւն, և՛ բարի, և՛ հեզ,
Արցունքացօղ կարօտով քեզ եմ երազում.
Միշտ հարազատ իմ հոգուն իմ երգերի պէս —
Ժպիտ ու լաց, յոյս ու տենչ, և՛ սէր, և՛ յուզում:

Ու բաց արած բազմերանգ թանկագին մի էջ,
Մանկութիւնս կարդում է ձայնով վարժ ու հին.
Դպրոց, դպրոցն է կանչում ինձ այդ էջի մէջ,
Ու մեր սիրած գեղեցիկ ու նուրբ վարժուհին:

Ֆեկրան

ԳԱԶԵԼ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Հեռո՛ւ հեռւից եկել եմ քո սուրբ հողը համբուրեմ,
Հողիդ վրայ արեւի ոսկէ շողը համբուրեմ:

Նոր ես, լցւած կենսուրախ ու ծաղկավառ գարունքով,
Կանաչներիդ բիւրեղեայ գարնան ցողը համբուրեմ:

Հայոց երագ, հայոց յոյս, հայոց պաշտպան, հայոց սիւն
Արարատիդ բազմադար կապոյտ կողը համբուրեմ:

Ու Մասիսի շուքի տակ, Արարատեան դաշտի մէջ,
Աղջիկներիդ ձեռքերում լոյս խաղողը համբուրեմ:

Շուշան-շուշան ժպիտով նազան-նազան օրօրւոյ
Պարող սիրուն կոյսերիդ դէմքի քօղը համբուրեմ:

Ծաղկոյ երկի՛ր, կառուցւող ու բարձրացող օրէօր,
Ալիքւոյ կառուցումիդ տենդոտ դողը համբուրեմ:

Ժողովո՛ւրդ իմ հանճարեղ, ստեղծագործ երգով լի
Քո ստեղծող, կառուցող ու երգողը համբուրեմ:

Ու քո հոգու, արւեստի ու գիտութեանդ ծնած
Մինչև երկինք սլացող վեհ կոթողը համբուրեմ:

Մեծ վերելքդ են գովերգում պոէտներդ խանդավառ,
Պոէտներիդ երգերի գովքի տողը համբուրեմ:

Փառքի երկի՛ր, փառահե՛ղ, վերածնւած Հայրենի՛ք,
Նոր փառքերդ աւետող հնչուն փողը համբուրեմ:

ԴԵՒ